Հայ գաղթաշխարհի պատմություն (միջնադարից մինչև 1920 թ.), հ. 2, Ասիայի և Աֆրիկայի հայկական գաղութները. *Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2003, 518 էջ:*

Հայ ժողովուրդը, պատմական ճակատագրի բերումով, դեռևս վաղ միջնադարից սկսած հարկադրված է եղել բռնի ուժի ճնշման ներքո կամ հայրենիքում կյանքի պայմանների վատթարացման, անձի ու գույքի անապահովության հետևանքով վերցնել գաղթականի ցուպը և հեռանալ օտար երկրներ: Բնականաբար, ապրելով խորթ միջավայրում, այլակրոն, այլալեզու և այլացեղ ժողովուրդների շրջանում, գաղթի ենթարկված հայությանը ոչ միշտ է հաջողվել իր խարիսխ գցած երկրներում պահպանել սեփական լեզուն, կրոնը, դարերով սրբագործված ավանդույթները, ազգային դիմագիծն ու հոգեկան կերտվածքը: Տևական ժամանակաշրջանի ընթացքում ենթարկվելով ազգային դիմահեղման և ուծացման, աստիճանաբար կորցնելով «հայկականությունը» և համաձուլվելով տիրապետող ժողովրդի հետ, ի վերջո, անհետացել է պատմության ասպարեզից: Սակայն դրա հետ քիչ չեն այն դեպքերը, երբ դրսևորելով աներևակայելի կենսունակություն և նոր միջավայրին հարմարվելու զարմանալի ունակություն, հայերն օտար երկրներում ոչ միայն կարողացել են պահպանել իրենց գոյությունը, այլև շնորհիվ իրենց աշխատասիրության, նախաձեռնող ոգու և մտավոր կարողությունների կարողացել են կազմակերպել իրենց ներքին կյանքը և ստեղծել կառույցներ, որոնց շնորհիվ հնարավոր է եղել պահպանել այն ամենը, ինչ բնորոշում է ազգի ու ժողովրդի էությունը: Ընդ որում աշխարհասփյուռ հայ գաղութների և գաղթօջախների թիվն այնքան մեծ է եղել, իսկ նրանց խաղացած դերը համահայկական կյանքում այնքան պատկառելի, որ անհնարին է նրանց պատմությունը կտրել, անջատել հայ ժողովրդի պատմական զարգացման ընդհանուր ընթացքից: Հիրավի, դաղութահայության պատմությունը հայ ժողովրդի պատմության անխզելի ու անբաժանելի մի մասն է: Իրավացի է անվանի պատմաբան Լեոն, երբ գրում է. «Հայոց ժամանակակից պատմության ամենախոշոր, ամեն ինչ վճռող և բացատրող հատկությունն այն է, որ նա կազմվում է հայ գաղութների հզոր ազդեցության տակ, համարյա նրանց ձեռքով միայն: Բուն Հայաստանն ապրել է սկսում իր գաղութներում ստացած գաղափարներով, ցուցումներով, ներշնչված շարժումներով... Հասկանալ և բացատրել այն ամենը, ինչ XIX–XX դարերում կատարվեց բուն Հայաստանում այնպիսի արագահոս ուժգնությամբ, որպիսին չի տեսել հայոց պատմությունն իր առաջին օրերից, երբեք չի կարելի, թե նրանից անջատեք գաղութները: Դա բոլորովին անհնարին է, որովհետև ժամանակակից պատմության ընթացքում գաղութների և մայր երկրի կյանքը միախառնված, ամբողջացած է և անկարելի է բաժանարար գծեր դնել երկու կողմերի մեջ»:

Բնավ պատահական չէ, որ դեռևս XIX դ. սկսած գաղթաշխարհի պատմությունը մշտապես գտնվել է հայ պատմաբանների սևեռուն ուշադրության կենտրոնում: Այդ հետաքրքրությունը աշխարհասփյուռ հայության նկատմամբ էլ ավելի մեծացավ XX դ.: Բազմաթիվ հայ և օտարազգի գիտնականներ, իսկ երբեմն էլ պարզապես սիրողուսումնասիրողներ, հրատարակեցին արժեքավոր ուսումնասիրություններ ու մենագրություններ, որոնցից շատերը մինչև օրս չեն կորցրել իրենց արժեքն ու թարմությունը: Այդ բնագավառի կարկառուն երախտավորներից է սփյուռքահայ պատմաբան Արշակ Ալպոյաճյանը, որն ըստ էության հիմք դրեց հայ դալլթականության կամ գաղթօջախների գիտական ուսումնասիրությանը:

Խորհրդային շրջանում, երբ հայագիտությունը Հայաստանում վիթխարի առաջընթաց ապրեց, ասպարեզ իջան գիտական լավ պատրաստվածություն ունեցող, կարող ու արհեստավարժ մի խումբ պատմաբաններ, որոնց ջանքերով հայ գաղութների ու գաղթօջախների պատմության ուսումնասիրությունը ձեռք բերեց միանգամայն նոր որակ: Իսկ 60-ական թվականներին Աշոտ և Ռաֆիկ Աբրահամյանների հեղինակությամբ լույս տեսավ «Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության» երկհատոր աշխատությունը. սա ըստ էության առաջին փորձն էր, որը նպատակ էր դնում ամփոփ ձևով տալու հայ գաղթավայրերի պատմության ուրվագիծը միջին դարերում և նոր ժամանակներում: Այդ երկու հատորներում զետեղված էր ավելի քան երեսուն հայ գաղթավայրերի պատմությունը:

Վերջապես, 2002 թ. լույս տեսավ անվանի լեզվաբան Հրաչյա Աճառյանի «Հայ գաղթականության պատմություն» մեծածավալ աշխատությունը, որը գիտնականի տարիներ շարունակ կատարած պրպտումների արդյունքն էր:

Կարևոր է նշել, որ դեռևս տարիներ առաջ, գիտակցելով հայ գաղթօջախների պատմության ուսումնասիրության նշանակությունը հայ ժողովրդի ամբողջական պատմության հարցերը ժամանակակից գիտության պահանջների մակարդակով լուսաբանելու տեսակետից, Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտի կազմում ստեղծվեց հայ գաղթօջախների պատմության բաժին, որի հրատարակած արժեքավոր մենագրություններն ու հոդվածները միանգամայն նոր խոսք էին հայագիտության բնագավառում:

Եվ ահա հենց այդ նույն բաժնի ջանքերով, ընթերցողի սեղանին է դրվել «Հայ գաղթաշխարհի պատմություն» եռհատորյակի երկրորդ հատորը, որում ամփոփված է Ասիայի և Աֆրիկայի հայկական գաղութների դարավոր պատմությունը՝ դրանց սկզբնավորման շրջանից մինչև 1920 թ.: Հատորը հրատարակության է պատրաստել հայ դաղթաշխարհի պատմության գծով խոշոր երախտիք ունեցող անվանի պատմաբան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Վարդգես Միքայելյանը: Գրքի հեղինակային կազմը ևս բաղկացած է հայ գաղութների պատմության ուսումնասիրման գծով որոշակի վաստակ ունեցող հետազոտող-պատմաբաններից:

Կարևոր է նշել, որ հատորում տրվում է յուրաքանչյուր գաղութի ամբողջական պատմությունը՝ իր բոլոր հիմնական կողմերով, մի հանգամանք, որն ընթերցողին հնարավորություն է տալիս սպառիչ դաղափար կազմել տվյալ գաղութի անցած պատմական ուղու և գաղթաշխարհի կյանքում նրա խաղացած տեղի և դերի մասին: Այլ բան է, որ դա կատարվում է համառոտագրված ձևով, որովհետև ինքնըստինքյան հասկանալի է, որ այդ գաղութներից յուրաքանչյուրի պատմությունը համակողմանի կերպով լուսաբանելու համար կարելի է գրել հատորներ:

Գիրքը բացվում է Բյուզանդիայի հայ գաղթօջախների պատմությանը նվիրված ծավալուն ուսումնասիրությամբ, որի հեղինակը ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Հ. Բարթիկյանն է: Հարուստ ու արժեքավոր փաստական նյութի հիման վրա, պրոբլեմի խորը իմացությամբ շարադրվում են հայ ժողովրդի առնչությունները հույների և հունական աշխարհի հետ: Հայտնի է, որ հայերը Բյուզանդիայի պատմության դեռևս վաղ շրջանից սկսած այդ աշխարհակալ ու հզոր պետության մեջ զբաղեցրել են բարձր պաշտոններ, ընդհուպ մինչև կայսրեր, անվանի զորահրամանատարներ, հոգևորական պատրիարքներ և այլն: Հատկանշական է, որ բոլոր հարևան ժողովուրդներին բյուզանդացիներն անվանել են «բարբարոսներ»: Հայերը կազմել են բացառություն, քանի որ բյուզանդացիները նրանց դասում էին քաղաքակիրթ ժողովուրդների շարքում: Բուն Հայաստանից բյուզանդական ընդարձակ կայսրության տարածքներ տեղափոխված հայ ազնվականական ընտրանու ներկայացուցիչների նշանակալի մասը զինվորականներ էին: Զգալի թիվ էին կազմում նաև գործունյա առևտրականները, հմուտ արհեստավորները և այլն, որոնք մեծապես նպաստել են այդ հզոր պետության

տնտեսական, քաղաքական և մշակութային կյանքի վերելքին:

Համոզիչ փաստերով ցույց է տրվում, որ հայերը, հակառակ բյուզանդական իշխանությունների և հույն հոգևորականության գավանաբանական անհանդուրժողականության, ընդհանուր առմամբ Բյուզանդիայում ունեցել են կյանքի և գույքի ապահովություն: Սակայն գրանով հանդերձ, դառնալով քաղկեդոնիկ, նրանք, ի վերջո, ուծացել և համաձուլման ենթարկվելով չքացել են որպես հայեր:

Ուսումնասիրության մեջ Հ. Բարթիկյանը կատարում է մի կարևոր պարզաբանում. Հունաստանի սահմաններում գոյատևող այսօրվա հայ համայնքները կապ չունեն միջնադարյան գաղթականների հետ: Նոր գաղթականները նախկին բյուզանդական կայսրության վերոհիշյալ տարածքներն են եկել շատ ավելի ուշ, XIX դ., գլխավորապես օսմանյան սուլթան Աբդուլ Համիդ II-ի կողմից կազմակերպված հայերի զանգվածային ջարդերից և երիտթուրքերի իրականացրած հայոց ցեղասպանությունից հետո:

Հանրահայտ իրողություն է, որ հայ ժողովրդի պատմության, նրա մտավոր ու մշակութային կյանքի մեջ նշանավոր, ավելին, բացառիկ կարևոր դեր են ունեցել Կ. Պոլիսը և նրա հայ գաղթօջախը: Ա. Խառատյանը և Վ. Ղուկասյանը այդ հարցին նվիրված իրենց շահեկան ուսումնասիրության մեջ համակողմանի լուսաբանում են Արևելքի և Արևմուտքի միջև «ոսկե կամրջի» դերակատարություն ունեցած այդ քաղաքի և նրա հայ գաղթօջախի պատմությունը օսմանյան թուրքերի կողմից Կ. Պոլսի գրավման օրվանից (1453 թ.): Հեղինակներն իրավացի են, երբ նշում են, որ այդ հիշարժան պատմական տարեթվից հետո ձևավորված «հայ գաղթօջախը փաստորեն դարձավ այն խառնարանն ու կենտրոնատեղին, ուր աճեց ու զորացավ հայ քաղաքակրթության էական ու բաղկացուցիչ մասը կազմող արևմտահայ մտավոր ու հոգևոր մշակույթը»: Հիրավի, այդ գաղթօջախը այն բացառիկ կենտրոնն էր, որը սերտորեն կապված էր համազգային կյանքին և կարևոր դերակատարություն ուներ ոչ միայն Արևմտյան Հայաստանի, այլև համայն հայության քաղաքական, կրոնական ու մշակութային կյանքի իրողություններում:

Բարձր համարում ունենալով հայության մտավոր ու ֆիզիկական կարողությունների նկատմամբ, օսմանյան սուլթանները Մեհմեդ Ֆաթիհից սկսած իրենց մայրաքաղաքը բնակեցնում էին հայերի խոշոր զանգվածներով, այդ նպատակով պարբերաբար կազմակերպելով տարբեր վայրերից հայերի մեծ բազմությունների բռնի տեղահանություններ: Կ. Պոլիսը հայ բնակչությամբ համալրվում էր նաև կամավոր գաղթերի ճանապարհով: Ճշմարիտ է, որ այդ քաղաքը «հայերին գրավում էր ամենից առաջ տանելի պայմաններով. այնտեղ ավելի մեղմ էին դրսևորվում ազգային ու կրոնական ճնշումները համեմատած գավառի հետ»: Օսմանյան իշխանությունները հայ համայնքը ճանաչում էին իբրև առանձին «միլլեթ»: Քիչ չէին այն դեպքերը, երբ իրադործելով Կ. Պոլսում գերակշիռ քրիստոնյա բնակչության հույների թուլացման քաղաքականություն, սուլթանները բռնագրավում էին նրանց եկեղեցիները և հանձնում հայերին: Այդ քաղաքականության բաղկացուցիչ մասն էր նաև այն, որ սուլթանական ֆիրմանով 1461 թ. Կ. Պոլսում հիմնադրվեց հայոց պատրիարքարանը, որը հետագա դարերի ընթացքում աչքի ընկավ հայոց ազգային-կրոնական կյանքին ուղղություն տվող իր կարևոր դերակատարությամբ:

Կ. Պոլիսը հայերին ձգում էր նաև այն պատճառով, որ այնտեղ գոյություն ուներ «հայկական մթնոլորտ» դպրոցներ, ուսումնարաններ, թատրոններ, եկեղեցիներ, ազգային զանազան հիմնարկություններ, հայ տպագրություն, մամուլ, վերջապես վառավոր հայ մտավորականություն և այլն: Մի խոսքով, Կ. Պոլիսն ապրում էր լիարժեք հայկական կյանքով՝ դառնալով համայն հայության կարևորագույն հասարակական-քաղաքական ու մշակութային կյանքի կենտրոն:

Ա. Խառատյանի գրչին է պատկանում նաև Զմյուռնիայի և սրան կից Էգեյան ծովի շրջանների հայ գաղթավայրերի պատմության քննությունը: Հայտնի է, որ

Զմյուռնիան հայ դաղթաշխարհի նշանավոր առևտրական կենտրոններից մեկն էր: Այդ գաղթօջախը սկզբնավորվել է XIV դ. և իր վախճանին հասել ու մարել 1922 թ., երբ թուրք միլլի-ազգայնականների քեմալականների զորքերը թուրք-հունական պատերազմի եզրափակիչ փուլում ներխուժեցին այդ քաղաքը, հրդեհեցին հայոց թաղը, կազմակերպեցին հայ բնակչության կոտորած և վերջ տվեցին այդ հետաքրքիր գաղթօջախի 600-ամյա գոյությանը:

Գրքում զգալի տեղ է գտել նաև Իրանի հայ գաղթօջախի պատմությունը: Այդ բաժնի հեղինակն է Հ. Մարտիրոսյանը: Իրանի հայ գաղթօջախը ևս համարվում է հնադույններից մեկը: Նրա սկզբնավորումը վերաբերում է III–IV դդ.: Այդ գաղթօջախը բացառիկ է ոչ միայն այն առումով, որ վաղ միջնադարից սկսած այն երբեք չի ընդհատվել և համազգային տարողությամբ մշտապես խաղացել է կարևորագույն դեր, այլև նրանով, որ պահպանվել և իր գոյությունը շարունակել է մինչև մեր օրերը: Ուշ միջնադարում, երբ բուն Հայաստանում տիրապետող համատարած ավերի, տնտեսական քայքայման, մտավոր աղքատացման պայմաններում հայ ժողովրդի քաղաքական, տնտեսական ու մշակութային կյանքի զարգացումը մտել էր փակուղի, Իրանի հայ գաղթավայրը և առաջին հերթին Նոր Ջուղան դարձան տնտեսական ծաղկման, մշակութային վերելքի ու մտավոր վերածնության կղզյակներ:

Գրքի մի խոշոր հատված, որը նվիրված է արաբական երկրներում (Եգիպտոս, Սիրիա-Միջագետք, Լիբանան) հայ գաղթօջախների պատմությանը, շարադրված է Վ. Միքայելյանի կողմից: Ինչպես հայտնի է, հայ ժողովրդի պատմական կապերը հիշյալ երկրների հետ իրենց արմատներով դնում են մինչև նախաքրիստոնեական ժամանակները: Պատմության նոր և նորագույն դարաշրջաններում հայ-արաբական առնչությունները դարձան ավելի սերտ ու բազմաբովանդակ: Մասնավորապես 1915 թ. արևմտահայոց ցեղասպանությունից հետո, շնորհիվ բարի ու ազնիվ արաբ ժողովրդի ասպնջական վերաբերմունքի, ջարդերից վերապրած հայության մեծամասնությունը ապաստան գտավ արաբական երկրներում:

Վերոհիշյալ երկրների հայկական գաղթօջախներում զարգացում ապրեցին հայ մշակութային հիմնարկությունները՝ դպրոցները, գրադարան-ընթերցարանները, պարբերական մամուլը, տպագրական գործը, թատերական կյանքը և այլն:

Վ. Միքայելյանը շարադրել է նաև Կիպրոսի գաղթօջախի պատմությունը: Հայերը հնուց անտի սերտ հարաբերություններ են ունեցել Կիպրոսի հետ: Այդ առնչությունները հատկապես սերտ բնույթ են ընդունել Հայկական Կիլիկիայի գոյության շրջանից: Կիպրոսահայ գաղութը հայ գաղթականության այն հատվածներից է, որը, սկսած խորը միջնադարից, ցայսօր անընդմեջ պահպանել է իր գոյությունը: Կիպրոսում Լուսինյան հարստության հաստատման ժամանակ (1192 թ.) հայերը կղզու քաղաքներում և գյուղերում արդեն պատկառելի թիվ էին կազմում: XIII-XV դդ. հայերի ձեռքին էր կենտրոնացված կղզու ողջ առևտուրը: Կիլիկիայի հայկական պետության անկումից հետո Կիպրոս են գաղթել մեծ թվով հայեր: XV-XVI դդ. կղզու վրա գոյություն են ունեցել երկու հայ եպիսկոպոսական աթոռներ:

1921 թ. Կիլիկիայից հեռացած հայության մի մասը հանգրվանել է Կիպրոսում: Միջնադարում և պատմության նոր ժամանակներում Կիպրոսի հայկական գաղութը իր նպաստն է բերել նաև հայ մշակույթի զարգացման գործին:

Գրքում հանգուցյալ պատմաբան Ռ. Աբրահամյանի գրչին են պատկանում «Աֆղանստան», «Հնդկաստան», «Եթովպիա», «Չինաստան» և «Հարավ-Արևելյան Ասիա» բաժինները:

Հայտնի է, որ Աֆղանստանը տևական ժամանակաշրջանի ընթացքում մտնում էր իրանական պետության կազմի մեջ, ուստի այդ երկրի հայ գաղթօջախը համարվում է Իրանի հայ գաղութի մի ճյուղը: Հայ գաղթականների առաջին ալիքը, ամենայն հավանականությամբ, Աֆղանստանում հաստատվել է դեռևս պարթև-արշակունիների տիրապետության շրջանում: Հետագայում, հատկապես XIV դ., բռնի տարագրության

հետևանքով, հայ գաղթականներ են հաստատվել Ղանդահարում, Քաբուլում և երկրի հյուսիսային շրջանների մի շարք այլ վայրերում: Հետագայում, անշուշտ, նրանք ձուլվել են տեղական մահմեդական բնակչության մեջ: XVII դ. Աֆղանստանի առևտրական քարավանային ճանապարհների հանգուցակետերում հաստատվել են հայ վաճառական-խոջաներ՝ հիմք դնելով փոքրաթիվ հայ գաղթօջախների: 1747 թ., երբ Ահմեդ շահ Դուրրանին հիմք դրեց Աֆղանստանի անկախ պետականությանը, Աֆղանստանը կտրվեց Իրանից, որի հետևանքով և փակվեցին Իրանի վրայով Աֆղանստան տանող ճանապարհները: Հենց այդ պահից հայ գաղթօջախը սկսեց խամրել և հայ բնակչության համաձուլումն ու իսլամականացումը հասավ իր ավարտին՝ փակելով այդ գաղթօջախի պատմության վերջին էջը:

Հայ ամենաուշագրավ գաղթօջախներից մեկը, անշուշտ, հանդիսացել է Հնդկաստանի հայ գաղութը: Դեռևս XV դ. կեսերից Հնդկաստանի ծովափնյա առևտրաշահ քաղաքներում սկսում են հիմնվել հայկական առաջին համայնքները, որոնց շուրջ հետագայում առաջանում են կազմակերպված գաղթօջախներ: Հնդկահայ գաղթօջախը բացառիկ խոշոր գեր է ունեցել հայ ժողովրդի ազգային-լուսավորական շարժման, ինչպես նաև ազատագրական գաղափարախոսության ձևավորման գործում: Ճշմարիտ է, որ նա քաղաքական զարթոնքի մունետիկն է հանդիսացել հայ իրականության մեջ նոր ժամանակներում՝ տալով այնպիսի ականավոր ներկայացուցիչներ, ինչպիսիք էին Շահամիր Շահամիրյանը, Մովսես Բաղրամյանը, Հովսեփ Էմինը, Հարություն քահանա Շմավոնյանը, Հակոբ Շահամիրյանը և ուրիշներ: Հնդկաստանը նաև այն նպաստավոր միջավայրն էր, ուր հաստատվել ու առևտրական լայն գործունեություն էին ծավալել միջազգային առևտրով զբաղվող հայ վաճառական-խոջաները:

Հնդկաստանի հայ գաղթօջախը XVIII դ. վերջերից թևակոխում է իր անկման շրջանը և XIX դ. վերջերին այն արդեն կատարելապես խամրել էր:

Աղբյուրները վկայում են, որ Չինաստանը այն երկրներից է, ուր հայերը ոտք են դրել վաղնջական ժամանակներից: Թեև Չինաստանը փակ է պահել իր դռները օտարների, և առաջին հերթին քրիստոնյաների առջև, սակայն հայ վաճառականներին հաջողվել է թափանցել այդ երկիրը և մի շարք քաղաքներում հիմնել ոչ մեծ հայ գաղթօջախներ: Նոր ժամանակներում հատկապես աչքի ընկնող գաղթօջախներ են եղել Շանհայում, Խարբինում, Մանջուրիայում և հյուսիսային Չինաստանի մի շարք այլ վայրերում: Ներկայումս Չինաստանում գրեթե հայեր չեն մնացել:

Ուշ միջնադարում և պատմության նոր դարաշրջանում ոչ մեծ հայկական գաղթօջախներ են եղել նաև Բիրմայում, Մալայզիայում, Սինգապուրում և Հոնկոնգում, սակայն բոլորն էլ մինչև XX դ. խամրել ու չքացել են:

Միջին Ասիայի հայ գաղթօջախի բաժինը շարադրել է Վ. Գրիգորյանը: Առհասարակ պետք է նշել, որ այդ երկրամասի հայ գաղթօջախի պատմությունը համեմատաբար քիչ է ուսումնասիրված: XIX դ. վերջին Միջին Ասիայում հայ գաղթավայրերի կազմավորումն ամբողջապես կապված է եղել այդ երկրամասի ռուսական գաղութացման հետ: Հենց այդ ժամանակաշրջանից նշված տարածաշրջանում երևան են եկել մնայուն հայ գաղութներ, որոնք իրենց գոյությունը շարունակում են մինչև մեր օրերը:

Այսրկովկասից դեպի Անդրկասպյան երկրամաս հայ ազգաբնակչության գաղթը XIX դ. վերջին և XX դ. սկզբին ընդունել էր խոշոր չափեր: Դրա հիմնական պատճառներից մեկը նշված ժամանակաշրջանում ազգամիջյան հակասությունների սրումն էր, մասնավորապես հայերի և կովկասյան թաթարների միջև բախումները, որոնք 1905-1907 թթ. ստացան կազմակերպված ջարդերի բնույթ: Ընդ որում հայությունը Անդրկասպյան շրջան էր հորդում ոչ միայն Այսրկովկասից, այլև սահմանակից Իրանից՝ բնակություն հաստատելով բացառապես քաղաքներում և քաղաքատիպ ավաններում:

Միջին Ասիայի հայ ազգաբնակչության թիվը մինչև 1920-ական թվականները ու-

ներ աճի միտում: Հայերը երկրամասի տնտեսական վերափոխման մեջ խաղում էին ակնառու դեր, մի հանգամանք, որը առաջ էր բերում ռուսական իշխանությունների դժգոհությունը, որոնք մտավախություն ունեին, որ երկրամասի տնտեսական կյանքի կարևոր լծակները աստիճանաբար կանցնեն հայերի ձեռքը: Սակայն, մյուս կողմից, հայերի ներկայությունը Միջին Ասիայում միանգամայն համապատասխանում էր նշված տարածաշրջանում ռուսական գաղութացման քաղաքական ու քաղաքակրթական նպատակներին:

Ինչպես ամենուրեք, Միջին Ասիայում ևս հայ վերաբնակիչները դրսևորում էին իրենց ազգային կյանքը համախմբելու ու կազմակերպելու ձգտում: Օգտվելով իշխանությունների կողմից ազգային համայնքներ կազմակերպելու թույլտվությունից, հայերը ձեռնամուխ են լինում իրենց համայնքային կյանքի կազմակերպմանը: Ստեղծվում են դպրոցներ, զանազան մշակութային կառույցներ, գրադարաններ, թատրոններ, բարեգործական միություններ և այլն: Վերելք է ապրում նաև եկեղեցական կյանքը: Այդ բոլորին զուգընթաց Միջին Ասիայի հայ գաղթօջախը երբեք չէր խզում իր հոգեկան կապերը հայրենիքի հետ:

Թուրքեստանի հայ գաղութների ճակատագիրը կտրուկ փոփոխության է ենթարկվում Ռուսաստանում հոկտեմբերյան հեղաշրջումից հետո: Քաղաքական անիշխանությունը, տնտեսական քաոսը, քաղաքացիական պատերազմը, սովը, համաճարակները և այլն հարկադրում են հայ բնակչության մի մասին լքել և հեռանալ երկրամասի սահմաններից, որի հետևանքով համայնքը նոսրանում ու խամրում է, իսկ ազգային զարգացումը ընդհատվում:

Պատշաճը մատուցելով «Հայ դաղթաշխարհի պատմություն» աշխատության կարևոր նշանակությանն ու արժեքին, մեր կարծիքով, սակայն, նրանում տեղ են գտել նաև որոշ առարկելի դրույթներ, վրիպումներ, անճշտություններ և այլն: Թույլ ու անբավարար է առանձին երկրներին նվիրված բաժինների աղբյուրագիտական բազան: Երբեմն բերվում են փաստացի նյութով չհիմնավորված կամ կասկածելի ծագում ունեցող փաստեր: Առանձին հատվածների շարադրանքը կրում է կոմպիլյատիվ բնույթ: Կան բազմաթիվ անձնանուններ, տեղանուններ և այլ աղավաղումներ:

Սակայն, կարծում ենք, որ մեր հիշյալ դիտողությունները չեն կարող ամենևին ստվերել այն կարևոր ու շնորհակալ գործը, որ կատարվել է գրքի հեղինակային կազմի կողմից հայ գաղթօջախների պատմության ուսումնասիրության ուղղությամբ: Մեր խորին համոզմամբ, ՀՀ ԳԱԱ կողմից հայ դաղթաշխարհի պատմության եռհատորյակի պատրաստումը մի նոր կարևոր քայլ է հայագիտության բնագավառում և արժանի է դրվատանքի:

ՎԱՀԱՆ ԲԱՅԲՈՒՐԴՅԱՆ